


# ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ ՄԻ

Ժ Բ Գ Ա Ր Ո Ւ \*

ԱՅՍ քարի վրայ քանդակուած արձանագիրը՝ գտնուած է քրիստոնէութեան հին տաճարի մի աւերակաց մէջ, Մայկոպի շրջանին՝ Սպիտակաշուր (Բելոռէշինսկիյ) կայարանին մօտ, և այժմ կը պահուի Տփդիսու կոլլասեան թանգարանին մէջ: — Ընթերցուած Հայ բնագիրն այսափ կարպացուի.

ԿԱՏԱՐԵՑԱԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԶԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՆ  
Մ... ՐՊԷԻՆ. ՀԱՅՈՑ...ՈՒ.Ն



Այս արձանագրէս կը տեսնով՝ թէ հարաւային Ռուսիոյ մէջ՝ Հայ գաղթականեր՝ ԺԲՌՌԴ դարուն երկրորդ կիսուն եւս կը գտնուէին: արդ կը Խընդուի թէ ո՞ր ճամբով անոնք կրցան մինչեւ հօս հասնիլ: Անոնք չէին կրնար հիւսիս—արեւելքէն գալ՝ անցնելով կոլլասեան շղթայի վրայէն, զի Եղեսացի

\* Հատուածո գրած է առօս լեզուա Պր. Փուշովք Յովհաննիսեան Առակվ. կայսր. Հնխօս. ընկերութեան անդամն, վերոյեղեալ արձանագրի գիւտի առթիւ, զոր թարգմանեմք մասամբ:

1. Կուպան գաւառի եօթն աւաններէն մին է:

Մատթէոս և Ստեփանոս Սիրնեցի պատմագրացմէ արդէն գիտեմք, որ այն ժամանակ Հայերն՝ նոյն ուղղութեամբ յառաջ գալով՝ Վրաստանէն անդին չէին անցներ : Իսկ ԺԲՌԴ գարու սկիզբն՝ երբ Վրաց Դաւիթ Բ. Նորպիշ թագաւորն Արշակունյաց ձեռքէն Անին առաւ և յետոյ 1424<sup>th</sup> իւր իշխանութեան ներքոյ ուովանդակ Բագրատունեաց աէրութիւնը, այն ժամանակ բազմաթիւ Հայեր գիմեցին ամէն կողմանէ յաղթական թագաւորին դրօշուն առակ : Անոր մի քանի յաջորդաց, ինչպէս՝ Դեմետր Ա., Դաւիթ Գ., Գէորգ Գ., և մանաւանդ հոչակաւոր թամար թագունոյն ժամանակ (1484-1512), Հայոց Վրաստանի ամէն կողմն տարածուեցան՝ մեփականելով անոր լեզուն, բարբը ու առջորդյթքը<sup>1</sup> : Այսու ծանօթութեամբ կը սպառի՝ այն ժամանակի Վրաստանի սահմաններէն՝ Հայոց դէպ ի հիւսիս գաղթելու մասին մեր ունեցած սակաւ տեղեկութիւնն :

Իսկ յարեւմուս գերը բոլորովին այլազգ կատարուեցաւ :

Յորմէ հետէ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնն տարածուեցաւ ի սկիզբն չորրորդ գարու, Հայոց և բարձանդական Յունաց մէջ հաստատուեցան կրօնական և քաջարական սերա յարաբերութիւնը. և Հայ պատանեկութիւնն խումբ խումբ կը դիմէր դէպ ի Յունաց վարժարաններ, ի կոստանդնոսուպոյիս, Ալթէնա, յԵղեսիա և յԱղեքսանդրիա, և դառնալով ի հայրենիս՝ իրենց հետ բերած յանական քաջարակիթութեան առաւ արդիւնք՝ բովանդակ Հայոց աշխարհին մէջ կը տարածէին : Վաճառականութիւնն կը կատարուէր Բիւզանդիոյ և այլ գրացի քրիստոնեայ ժողովրդոց հետ, ինչպէս՝ Վիրը, Աղուանք, և այլն : Այսուհետեւ Հայոց դրակից՝ մերթ և ազգակից Պարսիկաստանը, ուր այն ժամանակ կը թագաւորէին հօգոր Սասանէանք, գրեթէ մոռցուած էր : Մասյդ Է՝ որ այս ընդհանուր Յունաց ցուցուած ակն յայտնի մոներմութիւնն՝ ընդգէմ շահուց Պարսից, որ Յունաց նախանձախնողիր՝ միշա անոնց հետ մրցման մէջ էին Հայոց տանը տիրապետելու, Հայոց շատ աղիտարեր եղաւ : Մասանեանք յամի 432 յարմար առիթ գանելով Հայոց Արուաշէն թագաւորի և անոր անսասա նախարարաց մէջ տեղի ունեցած կը սփեները, ըստ վկայելոյ Մովսիսի Խորենացւոյ, առանց շատ աշխատութեան զԱրշակունիս գահնրնէց ըրբն . և որպէս զի Հայոց և Պարսից մէջ վերջնական միութիւն մի հաստատեն, սկսան զինու զօրութեամբ անսնց աշխարհին մէջ Զրադաշտի վարդապետութիւնը մանցընել : Քրիստոսական կրօնից այս հալած ծանքը՝ յառաջ բերաւ հայածելոց մէջ կամաւոր ատելութիւն ամենայն պարտ կային իրաց, և պատճառ եղաւ անոնց ի Բիւզանդիոն և անոր ասիական զաւատաց մէջ գաղթելու : Աստի երկու դար յետոյ՝ երբ Արարացիք գերեցին Հայոց աշխարհը, բնակչաց դէպ ի արեւմուս գաղթականութիւնն՝ աւելի եւս

1. Տես Հայոց պատմական մատենադարան, յէջ 313, Ե. Դիւլորիէի, Պարիս — Յիշատակագրութիւն Հայաստանի, հատ. Ա. յէջ 378, Ա. Մարտին, Պարիս 1819. — Պատմութիւն յիշուկ. Հայոց գաւառաց, Շոպէն, Պետերբուրգ:

զգալի եղաւ . վասնդի , ինչպէս հետեւեալ օրինակներէն կը տեսնուի՝ Արարաց լուծը խիստ ծանր եկաւ անոնց : Յամի 704 , Նախիջեւանու կուսակալ Հեշամ արաբացին՝ Դամասկոսի Արդ-էլ-Մէլլը (685-705) խալիֆային հրամանաւ խարէութեամբ հայ իշխանները Նախիջեւանու եկեղեցւոյն մէջ ժողվեց , և յանկարծ դռները վրանին փակելով՝ հրամայեց եկեղեցւոյն կրակ տալ . այրողներուն տղայց ու կանայց գերի տարուեցան ի Դամասկոս , ուր և վաշուց մեռած էր Սահակ հայրապետն <sup>1</sup> :

Թետոյ հոչակուոր Հարուն-էլ Հոռաշիդի ժամանակ (786-809) , Հայք տարուէ տարի Արարաց հարկ կու տային , 13000 դիւրգեմ <sup>2</sup> , 200 ջորի , 30 արկդ շաքար և 20 թանկագին գորգ <sup>3</sup> . . . . .

Արդ այս ժամանակներս Հայոց վրայ եկած հալածանք և բռնութիւնք սախպեցին զանոնք ակամայ հետեւել այն ճամբուն , որ հասուց մինչեւ իրենց ներկայ զաղթականութեան տեղը : Գաղթականաց մի մասն զիմելով գէպ յարեմուտ՝ հաստատուեցան Տաւրոսի լեռանց վրայ , և անտի իշխելով և յառաջելով գէպ ի Միջերկրական ծովուն հիւսիսային ափոնքը , ունանք ալ շաելով ի Բիւզանդիոն՝ ցրուեցան այլ և այլ գաւառաց մէջ :

Արեւելեան կայսրութեան քաղաքական կենաց մէջ Հայք փայլուն գեր մը խաղացին , երբեմ կարեոր տեղերն իսկ գրաւելով , զի լեզենաց մէջ ամբողջ հայ գունզեր այլ կը գտնուէին :

Լեռն սարկաւագն կը պատմէ՝ թէ երբ Նիկեփոր Փոկասն պաշարեց զկրեսէ Կողի (960ին) հոչակեցաւ այն գունզերուն արութիւնը <sup>4</sup> :

Դարձեալ հոն Հայոց բազմաթիւ լինելը կը տեսնուի թէոփանէսի , կերպենոսի և այլ Բիւզանդական պատմաց գրութիւններէն : Ի վերջ տասներորդ դարու (988) , Վասիլ Բ. Կայսեր (օրդի Բ. Ռոմանոսի) ժամանակ՝ իրեն հպատակ Հայոց մասն մի գաղթեցուց ի Մակեդոնիա , որիս զի անոցմով ամրանայ ընդգէմ Բոլղարաց՝ (որ անզարար կ ասպատակէին իւր տէրութեան հիւսիսային սահմանները) . անոնք աստատամբելով Կայսրէն՝ Բուլղարաց կողմէն անցան և բնակութիւն հաստատեցին <sup>5</sup> : Այդ զաղթականներն Բալկաննեան թերակղին ընկնելով այլ և այլ քաղաքական յեղափոխութեանց տակ զիւրաւ կըրնային անցնիլ Գուռնայի վրայէն , և զիմելով գէպ հիափս և հիւսիս արևելք , հասնիլ մինչեւ միշխազարեան Շուափոյ հարաւային սահմաններն , Ղրիմու և կուսանի գտառները , զոր կը հաւաստէ նաև այս մեր գտած արձանագիրն : Մեր ենթապութիւնը աւելի ևս հիմական կը թուի ,

1. Պատմ. Հայոց՝ Հ. Մ. Զամշեանի , Յովհ. Կաթողիկոսի և Ստեփ. Տարոնեցւոյ , և այլն :

2. Տեսակ մի ազնիւ ծառ է ուսկից արկդ շինելու փայտ կը պատրաստեն :

3. Հայս ժանուեցող պատմիչն է Արարացի Մուհամմէտ պէն Ալի պէն Թապաթապան :

4. Լեռն Սարկաւագ բրգմ. ի առա. Դ. Պոպով. Պետրովը 1820:

5. Լըրոյ , Պատմ. արեւէ. Կայսր. հա. Ժ. և Ստեփ. Տարոն. գիլք Բ. զլուկի իւ:

տեսնելով այն բազմաթիւ Հայ եկեղեցեաց տւերակները որք ցարդ յիշեաց տեղեաց մէջ կան<sup>1</sup>:

Ամելորդ յեմ համարիր ըսել, որ անոնց թաղկանեան թերակղղին գաղթած լինելու աւանդութիւնը՝ կենդանի մնացած է ի յիշատակո անոնց վերջին սերնդոց, այսինքն է՝ տուալին գաղթականաց ի Ծուսիա, Քերսոնի և Բենարարիոյ գաւառաց բնակիչ Հայոց մէջ. օրինակի համար Քերսոնի գաւառի՝ Ծերասպովեան շրջանի՝ Գրիգորովովիս քաղքին երեք բաժինին՝ թուրքարէն կ'անուանին, Քառչան-մահալէսի, Խամայիլ-մահալէսի, և Քիլի-մահալէսի, որ կը ցուցընէ անոնց՝ բաց ի յայլ տեղեաց՝ Քառչանէ, յիսմայելէ և ի Քիլիոյ գաղթելն:

1. Տես թագմակէպ, Գաղթականութիւն ի Կաֆա, գրեալ ի վաղաթառամ՝ Հ. Քերովքէ վէ Քուչնելեան հատ Խթ. 1891. Եր. 1892. — նոյնպէս և թրուն՝ ի գրռամածու իւր:

